



*«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ*

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ*

*ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ*

*ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ*

*ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ Ընտանեկան հոգեբանություն, կոնֆլիկտներ:*

*Առարկան՝ դասվար*

*Հետազոտող ուսուցիչ՝ Անի Գալստյան*

*Ուսումնական հաստատություն՝ Չարենցավանի Ստեփան Ավանյանի  
անվան թիվ 4 հիմնական դպրոց*

*Երևան 2022*

# Բովանդակություն

Ներածություն .....	3
Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ .....	4
Եզրակացություն .....	15
Օգտագործված գրականության ցանկ .....	16

## Ներածություն

Չկա ընտանիք, որտեղ ժամանակ առ ժամանակ չլինեն կոնֆլիկտներ (տարաձայնություններ): Գուցե իսկապես պատահական չէ մեծերի կողմից պարադոքսի նման հնչող այն խոսքը, որ եթե ընտանիքում չկան վիճաբանություններ, ապա այնտեղ ինչ որ բան կարգին չէ: Ընտանեկան տարաձայնությունները հնարավորություն են ստեղծում թուլացնել լարված մթնոլորտը, հասկանալ մերկողքին ապրող մարդկանց տեսակետներն ու համոզմունքները: Ի վերջո տարաայնությունները նաև կարելի է դիտարկել իբրև «նուրբ ազդակ», որի միջոցով ստուգվում է ներընտանեկան կայունությունը և ի հայտ եկող խնդիրները համատեղ լուծելու կարողության ու ցանկության առկայությունը: Մակայն առավել զգուշավոր պետք է լինեն այն ընտանիքները, որտեղ կան մարդիկ, ովքեր նոր են ծանոթանում կյանքի բազմաթիվ դրսևորումներին և դեռևս մեծ կախվածության մեջ են գտնվում ընտանիքի առավել փորձառու անդամներից: Խոսքն իհարկե երեխաների մասին է, որոնց հոգևոր և ֆիզիկական ճիշտ զարգացումն ու կայունությունը պետք է գերակա նպատակ լինի ընտանիքի բոլոր անդամների համար և ուղենիշ հատկապես ծնողների հարաբերությունները կարգավորելու գործընթացում:

## Ընտանիքի հոգեբանություն, կոնֆլիկտներ

<<Ընտանիք>> բառը լատիներեն familia(անգլերում՝ family)բառից է ծագել, որը նշանակում է տոհմ, ցեղ,ռուսերենում՝ семья-ն ծագել է <<սերմ>> բառից:

Սովորաբար ընտանիքի տեսակները դասակարգվում են ըստ կառուցվածքի: Առավել ընդունված է տարբերակել ընտանիքի 2 հիմնական տեսակ՝ միջուկային և ընդլայնված:

*Միջուկային ընտանիք:* Ընտանիքի այս տեսակը կազմված է միայն հիմնական անդամներից՝ ամուսնական զույգից և նրանց զավակներից: Այստեղ գործում են առաջնային՝ սերտ ու անմիջական հարաբերությունները:

*Ընդլայնված ընտանիք:* Ընտանիքի այս տեսակի կազմում, բացի ամուսիններից և նրանց երեխաներից, մտնում են նաև պապը, տատը և այլ հարազատներ: Ընդլայնված ընտանիքի տեսակ կարող է լինել նաև, երբ երկու միջուկային ընտանիքներ միասին են ապրում: Ժամանակակից ընտանիքի առաջնային ձևը և հիմքը նահապետական ընտանիքն է, որին բնորաշ է տղամարդու գերիշխանությունը ընտանիքում: Հասարակության զարգացմանը զուգընթաց ավանդական նահապետական ընտանիքը փոփոխվում է և ընտանիքում կանանց դերակատարումը մեծանում է:

Ժամանակակից ընտանիքի գործառույթները:

1. *Վերարտադրողական*- երբ ընտանիքում ծնվում են նոր մարդիկ՝ ապահովելով սերնդի վերարտադրությունը և մարդկության գոյությունը:

2. *Տնտեսական*- երբ ընտանիքը՝ որպես տնտեսական միավոր, վաստակում է կենսական միջոցներ և ծախսում՝ ապահովելով իր նյութական բարեկեցությունը: Նախկինում տնտեսական գործառույթը հիմնականում ապահովում էր տղամարդը, իսկ ներկայումս այն բաշխվում է ընտանիքի տարբեր անդամների միջև:

3. *Սոցիալականացման, դաստիարակչական*-դրա շնորհիվ երեխան ընկալում է նախորդ սերունդների փորձը, հասարակության մեջ վարքի նորմերն ու կանոնները: Ընտանիքն այն միջավայրն է, որտեղ աճում ու զարգանում է երեխան, ուստի նաև այստեղ են առաջին դպրոցն ու ուսուցիչները, որտեղ և ում օգույթամբ նա սովորում է ապրել:

4. *Հաղորդակցական*- երբ ընտանիքի անդամները շփվում են միմյանց հետ, զգացմունքներ, մտքեր և տեղեկություններ են փոխանակում, փոխազդում են՝ նպաստելով միմյանց զարգացմանը, անձնային, հոգեբանական վերափոխումներին:

Ընտանեկան կոնֆլիկտները

Ընտանեկան կյանքը մշտապես հարթ ու սահուն չի: Ամուսինների միջև հնարավոր են նաև վեճեր, որոնք կարող են ընդգրկել ընտանեկան կյանքի ամենատարբեր ոլորտները՝ հաղորդակցում, նյութական բարեկեցություն, երեխաների դաստիարակություն, ազատ ժամանակի կազմակերպում, հետաքրքրություններ և այլն: Շատ հոգեբանների կարծիքով՝ ամուսինների միջև վեճերն ու անհամաձայնությունները ծագում են նրանցից որևէ մեկի որոշակի պահանջների անբավարարվածության հետևանքով: Ընտանեկան անհամաձայնության պատճառ կարող է դառնալ նաև պայքարն ընտանիքում իշխանության համար: Այս դեպքում ամուսիններից յուրաքանչյուրը ձգտում է հասնել առավելության և հեղինակության, փորձում է ճնշել դիմացինին, որոշումների կայացման հարցում իր կամքը թելադրել:

Կոնֆլիկտների հաղթահարման ուղիները.

1. *Կոնֆլիկտի նախատեսում*.-Օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանների, մարդկանց փոխգործակցության, ինչպես նաև անհատական հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրում:
2. *Կոնֆլիկտի կախարգելում*.- Սա սուբյեկտի կառավարման գործունեության տեսակ է, որն ուղղված է կոնֆլիկտի ծագմանը խոչնդոտելուն:
3. *Կոնֆլիկտի կարգավորում*.- Սա սուբյեկտի այնպիսի գործունեություն է, որն ուղղված է կոնֆլիկտի թուլացմանը, սահմանափակմանը, մարմանը:
4. *Կոնֆլիկտի լուծում*.- Սա ուղղված է կոնֆլիկտի ավարտին:

Ընտանեկան վեճերն իրենց բնույթով կարող են լինել պերմանենտ (անընդհատ): Նման ընտանիքները հիմնականում լինում են քրեածին, կոնֆլիկտածին,

ամբարենպաստ ընտանքիներ: Վեճերի ժամանակ [գլխուղեղի](#) կեղևում առաջանում է

օպտիմալ գրգռման օջախ, որը կարող է ընդգրկել ահռելի ու ավելի կետերի տարածք: Այս դեպքում մարդը կորցնում է ինքնատիրապետումը, դիմացինին լսելու ունակությունը և վեճը վերածվում է կոնֆլիկտի: Ցանկացած վեճի հիմքում ընկած է անհատականության երևույթը, այսինքն անհատականը:

Մարդը աշխատում է հնարավորինս վիրավորելով դիմացինին բարձրացնել "Ես"-ի արժեքը: Կոնֆլիկտի հիմնական պատճառը անձնավորության որևիցե պահանջմունքի չբավարարված լինելն է: Սկսած ֆիզիկական, կենսաբանական, [Ֆիզիոլոգիականից](#) մինչև հոգևոր պահանջմունքները:

Կոնֆլիկտների մեխանիզմը հասկանալու համար անհրաժեշտ է առանձնացնել [պատկերացումների](#) 3 համակարգ՝

1. **Էզոցենտրիկ համակարգ** - որի հիմքում ընկած է սեփական Ես-ը, այլ մարդիկ կամ առարկաները հանդես են գալիս որպես կամ օգտակար գործիք կամ խոչընդոտ:

2. **Ալլետոքոցենտրիկ համակարգ** - կենտրոնում ընկած է ուրիշը:

3. **Սոցիոցենտրիկ** - հիմքում ընկած է մեկը:

**Ընտանիքի համար ճգնաժամային շրջաններն են՝**

1. **Միմյանց հարմարվելու փուլ**՝ ամուսնական կյանքի առաջի տարին է, երբ ձեվավորվում է նոր որակի հարաբերություններ, նոր հոգևոր արժեքներ:

2. **Երեխա ունենալու փուլ**՝ երեխաների ծնունդը բարդացնում է ամուսինների մասնագիտական աճի հնարավորությունները, քիչ ժամանակ է տրամադրվում անձնական գրավիչ գործունեությանը (հոբբի), կնոջ հոգնածության պատճառով,

կապված երեխայի խնամքի հետ, ժամանակավոր [սեռական ակտիվության](#) նվազումը:

**3. Բախման փուլ՝** երեխաների դաստիարակության վերաբերյալ ամուսինների և նրանց ծնողների հայացքների, տեսակետների բախումը:

**4. Միապաղաղության, կամ միջին ամուսնական տարիքի փուլ՝** այս շրջանը երբեմն անվանում են նաև [զգացմունքների](#) հագեցվածության փուլ, կամ քաղցի շրջան:

**5. Իվոլյուցիոն, կամ միայնակության զգացման փուլ:** Այս շրջանը համարվում է 18-ից 24 տարի համատեղ կյանքից հետո, որը հաճախ համընկնում է ինվոլյուցիոն շրջանի հետ: Կարող է ձեւավորվել միայնակության [զգացում](#)՝ կապված երեխաների հեռանալու հետ: Այս փուլում հսկայական նշանակություն ունեն արտաքին գործոնները՝ նյութական վիճակի վատթարացումը, աշխատանքի անցնելու անհնարինությունը, սեփական բնակարանի բացակայությունը և այլն: Ճնշող մեծամասնությամբ, պատճառները, որոնք հանգեցնում են ընտանիքում կոնֆլիկտային իրավիճակի, առաջ են բերվում սոցիալական գործոններով:

Ընտանիքն ամուր է այն ժամանակ, երբ գույգերի միջև ստեղծված են բարիդրացիական հարաբերություններ, երբ ազատ քննարկվում են տարբեր թեմաներ, երբ ամուսիններն ունեն ընդհանուր հետաքրքրություններ, ընդունակ են ապրումակցման, զիջող են և, ամենակարևորը, երբ ընտանիքի հիմքում սերն է: Կարևորելով ընտանիքի և ընտանեկան հարաբերությունների դերը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա՝ մենք, հարցաթերթային հարցման միջոցով, որին մասնակցել է ընդլայնված և բջջային ընտանիքների 40 ամուսնական գույգ, բացահայտեցինք կոնֆլիկտների առաջացման հաճախականությունը: Հարցաթերթային հարցման արդյունքում ստացանք հետևյալ պատկերը. Կոնֆլիկտների առաջացման հաճախականությունն ընդլայնված և բջջային ընտանիքներում Փաստորեն ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտներն ավելի հաճախ են ծագում, քան բջջային ընտանիքներում:

**Կոնֆլիկտ ծնող-երեխա հարաբերություններում:** Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում: Երեք տարեկանի ճգնաժամի պատճառը գոյություն ունեցող հակասությունն է երեխայի պահանջմունքների և դրանց բավարարման միջև: Երեխաներն այս շրջանում դառնում են կամակոր, համառ, ամեն ինչ անում են պահանջվածին հակառակ, բացասական վերաբերմունք են ցուցաբերում մեծահասակների նկատմամբ, թեպետ պետք է նշել, որ երեխայի նեգատիվիզմը ոչ բոլորի նկատմամբ է դրսևորվում. այն խիստ ընտրողական բնույթ է կրում և ուղղված է մասնավորապես նրանց դեմ, ովքեր փորձում են ճնշել իր ազատությունը: Մեծահասակները պետք է իմանան, որ երեք տարեկանի ճգնաժամն անցողիկ երևույթ է և վկայում է այն մասին, որ երեխան պատրաստվում է անցնել հաջորդ տարիքային փուլ: Ծնողների տեղեկացվածությունը, նրանց հանդուրժողականությունը թույլ չեն տալիս, որ ծնող-երեխա հարաբերություններում նվազի ջերմությունը, անջրպետ առաջանա: Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Դեռահասությունն ինքնին համարվում է ճգնաժամային տարիք, և այս տարիքային փուլում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռնումը: Այս տարիքային փուլում հաճախ է առաջանում հայրեր և որդիներ խնդիրը: Մի դեպքում դեռահասն սկսում է համեմատել Տիդեալական ծնողի՝ իր պատկերացումներն իրական ծնողների հետ և տեսնում է, որ հսկայական տարբերություն կա իդեալական և իրական՝ ծնողների միջև:

Մյուս դեպքում դեռահասը, որի մոտ սկսվել է ֆիզիկական բուռն զարգացման և սեռական հասունացման գործընթաց, սկսում է իրեն մեծ համարել և բոլորից պահանջել, որ իրեն վերաբերվեն ինչպես մեծի: Բոլոր դեռահասները, առանց բացառության, ունեն այդ ձգտումը: Այն ծնողները, ովքեր շարունակում են դեռահասին վերաբերվել փոքր երեխայի նման, ունենում են լուրջ խնդիրներ: Ծայրահեղ դեպքերում ծնող-երեխա լարված հարաբերությունները հանգեցնում են



նյարդայնության, ընկճախտի, բռնության դրսևորումների: Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդույթավորված:

Փոքր տարիքում երեխայի ագրեսիվությունը դրսևորվում է նրանում, որ երեխան սկսում է հանել տիկնիկի աչքերը, դիտավորյալ կոտրել խաղալիքները, պոկել ծաղիկները, քարով հարվածել բակի կատուներին և շներին: Գերադասում է խաղալ Տագրեսիվ՝ խաղալիքներով՝ զենք, ատրճանակ, նետ ու աղեղ և այլն: Այնուհետև երեխայի ագրեսիվ հակումները դրսևորվում են շրջապատող մարդկանց նկատմամբ: Երեխան ֆիզիկական ուժ է կիրառում իրենից թույլերի հանդեպ, փորձում ճնշել նրանց, նվաստացնել, ցավ պատճառել: Բազմակի դիտարկումները ցույց են տվել, որ ավտորիտար ոճի ծնողների երեխաները մեծանում են ընկճված, անվստահ, ինքնամփոփ, կաշկանդված, չշփվող: Նրանք ինքնավստահ և նախաձեռնող չեն, չեն կարողանում ինքնուրույն որոշումներ կայացնել, կազմակերպել սեփական կյանքն ու աշխատանքը: 3. Կոնֆլիկտ երեխա-երեխա հարաբերություններում: Երեխա-երեխաների հարաբերություններում կոնֆլիկտի պատճառները մի քանիսն են: Առաջին պատճառը երեխայի հանդեպ ուշադրության պակասն է: Որպես կանոն՝ ընտանիքում երկրորդ երեխայի ծնունդն առաջնեկի մեջ առաջացնում է մերժված, անտեսված լինելու զգացողություն, ինչն էլ կարող է վերածվել ատելության ինչպես ծնողի, այնպես էլ քրոջ կամ եղբոր նկատմամբ: Երկրորդ երեխայի ծնվելուց հետո ծնողներն առավել ուշադիր պետք է լինեն առաջնեկի նկատմամբ, նրա մեջ ձևավորեն դրական վերաբերմունք նորածնի նկատմամբ: Միայն ծնողից է կախված երեխա-երեխա հարաբերությունների բնույթը: Երեխա-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի առաջացման երկրորդ պատճառը ծնողի կողմից երեխաների միջև սեռային խտրություն դնելն է: Հայկական ընտանիքներում Տնորմալ՝ է տղա-աղջիկ

երեխաներին բաժանել ծնողների միջև: Մայրերը սովորաբար սիրում են տղա երեխաներին՝ տալով նրանց արտոնություններ, իսկ հայրերը նմանատիպ վերաբերմունք են դրսևորում աղջիկների հանդեպ: Երեխան դեռևս վաղ տարիքից հասկանում և զգում է ծնողի վերաբերմունքն ու սկսում է հակակրանք զգալ եղբոր կամ քրոջ նկատմամբ: Կոնֆլիկտ ընտանիքի այլ անդամների հետ: Եթե համեմատենք ընդլայնված և բջջային ընտանիքները, ապա կտեսնենք, որ ընդլայնված ընտանիքներում առաջանում են այնպիսի կոնֆլիկտներ, որոնք ուղղակի չեն կարող առաջանալ բջջային ընտանիքներում: Հայկական իրականությունում ընդունված ավանդույթ է, երբ տղան ամուսնանում և իր կնոջ հետ ապրում է հայրական ընտանիքում, որտեղ, բացի ծնողներից, ապրում են նաև եղբայրները, քույրերը և այլ հարազատներ: Որքան բազմանդամ է ընտանիքը, այնքան դժվար է ապահովել բարիդրացիական մթնոլորտ: Բազմաթիվ ընտանիքների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտը հիմնականում առաջանում է հարսների և սկեսուրների միջև: Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորության և խառնվածքի անհամատեղելիությունը և այլն: Կոնֆլիկտներ են առաջանում նաև ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցը: Առաջին հայացքից թվում է, թե այս տեսակի կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն, երբ երեխան ականատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում, վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը: Կոնֆլիկտային իրադրությունը երեխային դարձնում է սառնասիրտ, չշփվող, դաժան, անուշադիր, ագրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինքնամփոփ, ընկճված ու անտարբեր: Ընդհանրացնելով կատարած աշխատանքը՝ մենք եկանք այն եզրակացության, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ՏՃանր՝ բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և

մեծահասակների հետ, ունենում է ոչ աղեկվատ, ցածր ինքնագնահատական: Ցանկացած ընտանիքում վեճերն ու կոնֆլիկտներն անխուսափելի են, ուստի յուրաքանչյուր մեծահասակ ամուսնական զույգ պետք է սթափ գիտակցի, որ պատասխանատվություն է կրում ձևավորելու և դաստիարակելու առողջ երեխա: Այդ պատճառով ընտանիքում պետք է.

1. կոնֆլիկտների թիվը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում դրանց արագ լուծում տալ,
2. ընտանիքում ստեղծել խաղաղ, հանգիստ մթնոլորտ երեխայի ֆիզիկական և հոգեկան զարգացման համար,
3. բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես երեխայի, այնպես էլ ընտանիքի բոլոր անդամների հետ՝ հիմնված սիրո և հարգանքի վրա:

Ընտանիքի ստեղծումն ու պահպանումը համարվում է կյանքի կարևորագույն արժեքներից մեկը, սակայն, ցավոք, ոչ բոլորն ունեն բավականաչափ համբերություն և իմաստություն ընտանեկան խնդիրները խաղաղ ճանապարհով լուծելու համար: Ընտանեկան խնդիրներն ազդում են ոչ միայն ամուսինների փոխհարաբերությունների, այլև երեխաների զարգացման և բնավորության գծերի ձևավորման վրա: Հասուն տարիքում շատերը չեն հիշում իրենց մանկության տարիների տրավմատիկ իրադարձությունները, սակայն այդ ամենը, անկասկած, հետք է թողնում մարդու հետագա կյանքի վրա: Մարդկանց ընտանեկան կյանքը հաճախ այնպես չի դասավորվում, ինչպես իրենք կցանկանային, առաջ են գալիս մի շարք տարաբնույթ խնդիրներ, որոնցից շատերը մարդիկ դժվարանում են ինքնուրույն լուծել և նման դեպքերում նրանց հաճախ օգնում է համակարգային ընտանեկան թերապիան: Համակարգային ընտանեկան թերապիան իրենից ներկայացնում է հոգեթերապիայի առանձնահատուկ տեսակ, որն ուղղված է ներընտանեկան հարաբերությունների կարգավորմանն ու ընտանիքում դրական մթնոլորտի վերականգմանը: Ընտանեկան թերապիայի այս մեթոդը կիրառվում է ներընտանեկան կոնֆլիկտների, երեխաների դաստիարակության հետ կապված խնդիրների լուծման դեպքերում,

ինչպես նաև այնպիսի խնդիրների առկայության դեպքում, երբ ընտանիքի անդամներից որևէ մեկը տառապում է թմրամոլությամբ, ալկոհոլամոլությամբ, խաղամոլությամբ և այլն: Որպես կանոն, համակարգային ընտանեկան թերապիային մասնակցում են ընտանիքի բոլոր անդամները:

Ընտանեկան համակարգային հոգեթերապիան վերերս զարգացող ամենաերիտասարդ դպրոցներից մեկն է: Այն ծագել է երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո, զարգացել է կիբերնետիկայի հետ:

Նման մոտեցման դեպքում այցելու է համարվում ամբողջ ընտանիքը՝ որպես միասնական համակարգ, որը հենց հանդիսանում է հոգեթերապիայի ներգործության արդյունք: Ընտանեկան համակարգը մարդկանց խումբ է, որոնք կապված են բնակության ընդհանուր վայրով, ընդհանուր տնտեսությամբ և ամենակարևորը՝ փոխհարաբերություններով: Այն, ինչ կատարվում է ընտանիքում, հաճախ կախված չէ մարդկանց մտադրություններից և նպատակներից, քանի որ ընտանիքի կյանքը կարգավորվում է համակարգի կողմից: Ընտանեկան թերապիան նպատակ չի հետապնդում ընտանիքը կազմող մարդկանց փոխելու: Բոլոր մարդիկ էլ կարող են ավելի երջանիկ ապրել իրենց ընտանիքում: Դրան խանգարում է ոչ թե այն, որ շրջապատի մարդիկ են վատը, այլ այն, որ ընտանիքը՝ որպես համակարգ, գործառում է սխալ: Հենց գործառությունն է, որ կարող է փոփոխվել ընտանեկան համակարգային թերապիայի միջոցով: Այս ուղղության ներկայացուցիչներից են Մյուռեյ Բուուենը, Ջեյ Հեյլին, Վիրջինիա Սատիրը, Կառլ Վիտակերը, Սալվադոր Մինուլսինը և այլք:

Ընտանիքի հոգեբանության կիրառական կողմը ներկայանում է երկու ձևով՝ որպես ընտանիքի հոգեթերապիա և որպես ընտանիքի հոգեբանական խորհրդատվություն: Ընտանիքի թերապիան՝ «լայն հասկացություն է, որով նշանակվում է տարբեր կենսաբանական, հոգեբանական և սոցիալական դժվարություններ ունեցող ընտանիքների հետ աշխատանքի մեթոդների շարքը» (Carr 2006: 3): Սակայն ոչ բոլոր դեպքերում է ընտանիքը հանդես գալիս որպես հոգեթերապևտիկ միջամտության նպատակակետ: Որոշ դեպքերում ընտանիքը դիտարկվում է որպես ընտանիքի

անդամի կենսագործունեության միջավայր և նրա վրա թերապիական ազդեցություն գործելու միջոց: Այս պարագայում «...հիվանդը (այսինքն՝ նա, ում պատճառով ընտանիքը դիմել է խորհրդատվության) դիտարկվում է ոչ թե որպես բժշկական տեսանկյունից հիվանդ, այլ ավելի շուտ որպես դիսֆունկցիոնալ ընտանեկան համակարգի տարր: Ընտանեկան թերապիան ենթադրում է երեխային կամ մեծահասակ հիվանդին ընտանիքի, որում նա հիվանդացել կամ ձեռք է բերել տարատեսակ շեղումներ, միջոցով թերապևտիկ օգնություն ցույց տալու հնարավորություն: Համապատասխանաբար, աշխատանքի կիզակետում հայտնվում են ոչ թե ընտանիքի անդամների ներհոգեկան խնդիրները, այլ ընտանեկան փոխազդեցությունների, ընտանիքի կառուց վածքի և գործընթացների ձևերը (տիպերը): Այսպիսով, ընտանեկան թերապիայի նպատակը ֆունկցիոնալ ընտանեկան կազմակերպություն ձևավորելու համար պայմանների ստեղծումն է, որը կապահովի ընտանիքի յուրաքանչյուր անդամի ներուժային հնարավորությունների առավելագույն աճ» (Черников 2001: 5): Ինչպես տեսնում ենք, այս դեպքում թերապիական ազդեցության գլխավոր առարկան ընտանիքի առանձին անդամն է, իսկ ընտանիքը հանդես է գալիս որպես այդ իսկ ազդեցության միջոց: Ընդ որում թերապիական ազդեցությունը կարող է և ուղղված լինել ամբողջական ընտանիքին, սակայն միայն ընտանիքի առանձին անդամի վրա ազդեցություն գործելու նպատակով: Ընտանեկան հոգեթերապիայի նմանատիպ մեկնաբանության ենք հանդիպում Էյդեմիլերի մոտ: Նա մասնավորապես նշում է, որ ընտանեկան հոգեթերապիան հոգեթերապիայի ոլորտ է, որը ներառում է ընտանիքի հետազոտությունը և հիվանդությունների կանխարգելման ու բուժման, ինչպես նաև հետագա հասարակականաշխատանքային վերականգնման նպատակով ընտանիքի վրա ազդեցությունը: Էյդեմիլերը նշում է, որ ընտանեկան հոգեթերապիայի մեթոդները կիրառելի են այնպիսի շեղումների դեպքում, ինչպիսիք են ներոզները, սուր հուզական և սուիցիդալ հակազդեցությունները, վարքի իրադրական պայմանավորվածություն ունեցող շեղումները, հարբեցողությունը, թմրամոլությունը, փսիխոպաթիաները, փսիխոզները և հոգեմարմնական (փսիխոսոմատիկ) հիվանդությունները (Эйдемиллер 1989: 4): Հետաքրքրական է այն հանգամանքը, որ Էյդեմիլերը

ընտանեկան հոգեթերապիայի ոլորտից դուրս է մղում ընտանիքի վրա հոգեբանական ազդեցության այնպիսի ձևերը, որոնք իրենց առջև չեն դնում բժշկական նպատակներ: Այդպիսի ոչ բժշկական հոգեթերապևտիկ ազդեցության օրինակ է պրոբլեմատիկ ընտանիքների խորհրդատվությունը, երբ ընտանիքը փորձում է դուրս գալ ստեղծված իրավիճակից, սակայն չի կարողանում ինքնուրույնաբար լուծել իր առջև ծառայած խնդիրները: Ընտանեկան խորհրդատվությունը, ըստ Էյդեմիլերի, թերապիա (բուժում) չէ բառի ճշգրիտ իմաստով (Эйдемиллер 1989: 4- 5): Իսկապես, ընտանիքի հոգեբանության երկու կիրառական կողմերը՝ ընտանիքի հոգեթերապիան և ընտանիքի հոգեբանական խորհրդատվությունը, ակնհայտորեն տարբերվում են: Այո՞չինայի մոտ հանդիպում ենք ընտանիքի հետ հոգեբանական աշխատանքի այդ երկու տարատեսակների պայմանական տարաբաժանմանը: Նա հոգեբանական խորհրդատվությունը սահմանում է որպես մարդկանց հետ տարվող անմիջական աշխատանք, որն ուղղված է միջանձնային հաղորդակցության դժվարությունների հետ կապված տարատեսակ հոգեբանական խնդիրների լուծմանը: Ըստ Այո՞չինայի՝ հոգեբանական խորհրդատվության ընթացքում, որպես ազդեցության հիմնական միջոց, կիրառվում է զրույցը: «Զրույցի համապատասխան ձև է կիրառվում նաև հոգեշտկողական աշխատանքում և հոգեթերապիայում, - շարունակում է Այո՞չինան, - սակայն եթե խորհրդատվությունը միտված է առաջին հերթին այցելուի միջանձնային փոխհարաբերությունների վերակազմակերպման հարցում նրան օգնություն ցուցաբերելուն, ապա հոգեշտկողական և հոգեթերապևտիկ ազդեցությունն ուղղված է հիմնականում կենսական դժվարությունների և կոնֆլիկտների մեծ մասի հիմքերում ընկած՝ մարդու խորքային անձնային խնդիրների լուծմանը» (Алешина: 1999:11):

## Եզրակացություն

Ընտանեկան անբավարարվածության վիճակն առաջանում է կոնֆլիկտային իրավիճակների արդյունքում, որոնցում դրսևորվում է տարաձայնություն տվյալ անհատի վերաբերյալ, սպասումների և նրա իրական կյանքի միջև: Կոնֆլիկտից կոնֆլիկտ, կուտակվելով, այսպիսի անբավարարվածությունը արտահայտվում է հուզական պոռթկումներում և հիստերիկ դրսևորումներում, որոնց հաճախականացումը կարող է լրջորեն խաթարել ընտանիքի ամրությունը:

Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ: Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը:

# Օգտագործված գրականության ցանկ

Էլեկտրոնային սկզբնաղբյուր՝ Doctors.am

1. Մեդրակյան Ս.Ս. Ընտանիքի հոգեբանություն. Երևան: 2010, 456 էջ:
2. Ильин Е.П. Дифференциальная психофизиология мужчины и женщины. СПб.: Питер, 2003. - 544с.
3. Лобан Н.А. Конфликтология : УМК – Минск.: Изд-во МИУ, 2008. 471с.
4. Ребус Б.М. Психологические основы управления школой. – Ставрополь.: СГПИ. 1990. - 144с.
5. Сергейчук А.В. Социология управления. - СПб.: Бизнес-пресс, 2002. 240с.
6. Столяренко А.М. Общая и профессиональная психология. - М.: ЮНИТИ-ДАНА, 2003. 382с.